Այսպէս ուրեմն Պետրոս Մեծի ժամանակից ի վեր Ռուսաստանի և հայ ազգի միջև հաստատուած բարոյական կապն և մտերմութիւնը լիովին գիտակցօրէն ամրացան Եկատերինէի իմաստուն կառավարութեան օրով. և այդ յարաբերութիւնների բնական հետևանք էին Ռուսաստանի ամեն կողմանց հայերի բոլորանուէր հաւատարմութիւնն և նրանց մատուցած երախտիքը, որոնք բազմաթիւ հրովարտակներով յանուն հայ ազգի և նրա հայրապետների վաւերացուած են նոյն իսկ Դահի բարձունքից։

Իւր հայրենիքին լաւութիւն կամեցող իւրաքանչիւր քաղաքացու, և մանաւանդ իշխանութիւն վայելող մարդու սուրբ պարտքն է վառ պահել այդ զգացումներն և նպաստել դրանց զարգացման. բարի ծառայութիւն անող չեն նրանք, որոնք թուլացնում են այդ բարոյական շաղկապներն և փոխադարձ անվստահութիւն գրգռում այնտեղ, ուր դրա համար բնաւ պատմական հիմք չկայ։ Անցեալի ծանօթութիւնը վերացնում է մէջ տեղից թիւրիմացութեան առիթներն և փոխադարձ համակրութեան ու յարգանքի բարի զգացումներ յառաջ բերում։ Երջանիկ կը համարենք մեզ, եթէ մեր հետազօտութիւնը գէթ փոքր ի շատէ նպաստէ այդ գործին։

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան